

ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուրկարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ

ԿԱՆԽԻԿ



ՊԵՅՄԱՆՔ

Գրութիւնք և տ
չեն տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՅ. 7 ՇԱԲԱԹ 1900

ԹԻԻ 182

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ

Հէվերհէլ, 13 սեպտ. 1900

Համոզուած ըլլալով որ «Հայերի» պատրաստ է նոր աշխարհի մէջ ապրող ազգայնոց վարք ու բարքին պատկերներն ալ ցոյց տալու, այսօրէն կը սկսիմ անոնցմէ մաս առ մաս հաղորդել ձեզ, խոստանալով ճշգրտութեամբ տեղեկագրել ամեն ինչ նախ պէտք է գիտնալ թէ տեղւոյս հայ դա ղութիւն մեծաւ մասամբ երիտասարդներէ կը բաղ կանայ. հոս կեանքը բաղմատեսակ է և ամէնքն ալ Ազգային կեանք կը կոչուին իրենց բաղադրեալ գոյներովը:

Հոս կայ Աւետարանի կարծեցեալ պաշտօնեաներու խմբակ մը, (յարգելով բացառութիւնը) որ կը հաւատայ թէ ո՛ւր որ աւետարանը կը քարոզուի, հոն է հաւատացեալին հայրենիքը. այսինքն ո՛ւր որ իրենց ստամոքսին դոհացում տրուի՝ հոն է իրենց հայրենիքը: Հոս են յեղափոխական փաստաբանները, որոնք իրենց օրապահիկին համար քմածին մեկնաբանութիւններով միամիտներու խումբ մը ձեռք բերուն մէջ գործիք ըրած՝ կարելի եղածին չափ կը ջանան անոնց ժամանակը խօսքով սպաննել: Կան անհատներ՝ որոնք հայրենիքի տառապանքը իրենց շահու միջոց ընտրած են. կան խաղափոխներու և փրկարարներու խումբ մը, որոնց համար ամեն յորդոր և խրատ անխելի կը մնան. կան որ հայրենասէրի դիմակ կը կրեն ու ձեռք անցուցած քանի մը հարիւր տղարներով վաշխառուի

դերը ստանձնած՝ հայրենակիցներու գլխուն հարուածներ իջեցնելը իրենց համար մեծ յաղթանակ մը կը սեպեն. Վերջապէս հոս անտալքերներու լեզուն մը ունինք որ ամեն ազգաշէն գործերէն ու պարտականութիւններէն ձեռք քաշած՝ առանց զգալու ո և է խղճի խայթ, միմիայն իրենց մորթէն ներսը կը նային: Անդին կը մնայ խումբ մը, թուով աննշան, որ կ'ուզէ իրական Ազգային կեանք մը ստեղծել, որ ինքզինքը պատասխանատու կը ճանչէ. ազգային գործոց հանդէպ, այս խումբը կը բաղկանայ դրասէրներէ, հայրենասէրէ, եկեղեցասէրներէ ու գեղարուեստի ճաշակաւորներէ:

Վերի վերոյ հաշիւ եղած է որ Ամերիկայի մէջ 15,000 հայեր կը բնակին ու այդ պատկառելի թուոյն համեմատ մէն մի քաղաքի մէջ խիստ փոքրամասնութիւն մը կ'աշխատի ժամանակիս պահանջից համեմատ յառաջդիմել գէպի բարին ու լաւն:

Ասկէ երեք տարիի չափ առաջ Ամերիկա հասաւ Տ. Մաշթոց վարդապետ որու առաջին գործը եղաւ այսօրուան գոյութիւն ունեցող գրադարան կամ ընթերցարանները. բացի քանի մը գլխաւոր հայաշատ քաղաքներէ, մնացեալը երիտասարդ վարդապետին գործունէութեան արդիւնքն է. նա խթան մը եղաւ անտարբերները իրենց խոր քունէն սթափեցնելու գործին մէջ:

* *

Յաւելով կը խոստովանինք թէ տեղւոյս հայ թերթերն ալ արտասահմանի կարգ մը թերթերուն պէս չատ անգամ իրենց ստանձնած պարտա-

կանութեանցը մէջ կը թերանան, այսինքն կուսակցական ու անձնական սնտոր վիճաբանութիւններով ժողովուրդը կը պաշտօնեն, ամենեւին չը յիշելով թէ ամեն բան չափ մը ունենալու է, թէ իրենց սիւնակները օրկան թերթերու չափ կուսակցական խնդիրներու համար յատկացնելու չեն:

Ասոնք քանի մը շաբաթներէ ի վեր զինադադար յայտարարած են. անոնք երբեւան պիտի ելնեն, և ինչ նոր զէնքերով:

Ներկայիս օրուան հարցն է «Միութեան» յաւիտենական խնդիրը ու «Պատու» ատենան: Հնչ պատգ. ժողովոյ կողմէ շրջաբերական մը լած է որ կը հրաւիրէ թէ՛ կուսակցութիւնները և թէ՛ չեզոք ժողովուրդը Ուստրի մէջ հօկտ. Յին ժողովք գումարելով միութեան արգելքները բառնալու միջոցներուն վրայ խորհրդակցելու:

Տեսնենք, այս խնդիրը որչափ ատեն պիտի տեւէ և . . . դուխներ ունեցնէ:

Մ. ԿԱՐՕ

ԱՉԳԱՅԻՔ

ԲԱՐԻՁԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏՈՒՌ

Բարիկէն մեզ կը գրեն. «Ալ կարելի է յուսալ որ Բարիկ ալ ունենայ իր յատուկ Մատուռն ու Առաջնորդարանը, որոնց համար առ նուազն կէս միլիոն ֆրանք պիտի ծախսուի: Սոյն գումարին միայն 200,000 ֆրանքը պիտի տայ Ռուսահայ հարուստ Պ Մանթաշեան: Եկեղեցւոյն յատկագիծը ինք չինել տուած է, որուն համար յատկապէս երկու ճարտարապետներ զրկած է Անի քաղաքն և հոնտեղի եկեղեցիներուն նման գծագրել տուած է զայն:

Մատրան հոգաբարձութիւնը կը կաշմեն հետեւալ տղգայինք.

Տեսրք Աթանազինէ Էգնատեան, Իգնատիոս և Զորիկ Զօրայեան, Արամ Սէթեան և տօքթ. Յովհաննէս Սըքեան:

ԱՐԳՈՍ

—Միխալըճի աղգայինք ի նպաստ հիւանդանոցի մէջերին հանգանակութիւն մը կատա-

րելով, 10 օրուան մէջ 4000 օխա տխ, 32 հատ խսիր և 500 շրշ. հաւաքելով զրկեր են Աղգային Հիւանդանոց:

—Ռուսոգի թաղ. խորհուրդը իր վարժարանաց կազմակերպութեանը մասին Ուսումնական խորհուրդէն հրահանգ խնդրած ըլլալով, խորհուրդը որոշեց է պէտք եղած հրահանգը շրկել:

—Տեղւոյս աղգ. վարժարանաց Հոգաբարձութիւնը ըստ օրինի կը հրաւիրէ ծնողքները կամ պաշտպանները որ աշակերտաց ամսաթոշակները ամեն ամսոյ մինչև հինգերորդ օրը վճարեն. հակառակ պարագային՝ Հոգաբարձութիւնը պիտի ստիպուի ճամբել ալի կարգի աշակերտները:

Ծանրագին Հոյսահարց

Տիեզերածանօթ երգչուհի Ատելինա Բաթթիի գահարկէններու հաւաքածոյին մէջ կը գտնուի ծանրագին հովանար մը որուն վրայ եւրոպայի վեհագետներէ մէկ քանիններուն ձեռագիրները կան:

Աղեքսանդր Բ. Զարը գրած է. — «Ձեր ձայնէն անուշ բան չկայ»:

Գերմանիոյ Կիլեով Ա. կայսրը. — «Մեր ժամանակին սոխակը»:

Անգլիոյ Վիկթորիա թագուհին. — «Եթէ ըստոյգ է որ գեղեցիկ ձայնը կնոջ մը համար թանկագին յատկութիւն մըն է, ուրեմն սիրելի Ատելինա, դուք կանանց ամենահարուստն էք»:

Գալիոյ Հանր. նախ. Թիէռ. — «Երգերու թագուհին, Ձեզ կը նուիրեմ յարգանքներս»:

Յուսակաւն արձան մը

Վերջերս Աթէնքի մօտերը գտնուել է Ապոլոնի գեղեցիկ մարմարէ մէկ արձանը, մարդաչափ բարձրութեամբ: Գլուխը հիւսնալի կերպով անաղարտ մնացած է: Գործին յօրինուածութիւնը կը վերաբերի հինգերորդ դարուն (Ն. Բ.): Արձանը շատ աւելի գեղեցիկ և շատ աւելի մեծ է քան Միլոնիի մուսէոնին մէջ գտնուած արձանը: Հնախօսները շատ ուրախ են այս գիւտին վրայ:

ՍԻՐԱՅԻՆ ԿԱՑԾԵՐ

ԵՐԹԱՍ ԲԱՐՈՎ

Կօրօրուէի եւ յոյսերով փաղկապիմուն
Երբեք չեի բաղձար մեկնիչ աշխարհէն
Քու սիրով յոյ, գրգռանքներով առողջուն
Ձեի հաւսար թէ մարդիկը կ'աշխարհէն:

Անուրջներու հեշտանքին ծոցն ընկողնած,
Ապագայի ոսկի կեանքին ակննդէ՝
Կը կարծէի թէ դուն, աղջիկ սիրամաժ,
Խօսքերուդ սեր պիտի ըլլայիր առ յաւիտէս:

Սակայն, ապա՛ն, եւ շուտ եղայ հիւսարարի.
Դուն՝ անխորհուրդ՝ պարկիկն պէս անմասնոյց,
Թրուար գացիր, ու հոգիիս խանդն ու քափ
Ձրաւեցիր, սիրտը ըրիր՝ քա՛նք մը ոյժ...:

Ահ, ձօնէիդ ինձի, աղջիկ, ինչ կ'ընար,
Դէք ժրպիտ մը, գէք ջուրիս մը խօսք՝ արտաքին.
Հիսուս, խեղճ եմ, ըզգայադերկ ու մոլոր,
Այլերէս քա՛նք արցունքներու կիցնէ ողիս...:

ԾՈԹՅՐ

Սիւրիսդէ 30 Օգոս. 1900

ՈՐԿՐԱՄՈԼՆԵՐՈՒ ԱՐՇԱԽԱՆՔԸ

Պերլիտի մէջ հետզհետէ շատնալու վրայ եղող մեծ
վաճառատունները միջոցներ կը խորհին հասարակութիւ-
նը իրենց քաշելու համար. բայց երբեք անանկ արտա-
նոց միջոցներ կընտրեն որ մարդս ափ ի բերան կը ձը-
գեն: Ասոր մէկ նմոյշն է հետեւեալը.

Վերջերս նոր հիմնուած վաճառատուն մը հրապա-
րակաւ կը ծանուցանէ թէ բացման օրը ճաշ պիտի տայ
բոլոր ներկայացողներուն: Այս ծանուցումը, ինչպէս կը
գուշակուի, որկրամոլներու ահագին ամբոխի մը ախոր-
ժակը կը գրգռէ: Որոշիալ ժամէն առաջ անօթի փո-
րանց կը վազեն կը խոնուին վաճառատան գուռներուն
առջեւ: Հրաշք մ'է հղեր որ արկած մը չէ պատահեր այդ
հրմշտութիւն մէջ: Լրագիրը մը սա կերպով կը պատմէ այս
ճշմարիտ արշաւանքին ու աւարառութեան տեսարանը.
«— Ի մէջ այլոց տեսանք երկու պարոններ որոնք եղբոր
պէս իրենց մէջ կը բաժնէին սիկառի տուփեր գրպաններ
թխմով, Բեքնակո՛, հրախրեալը գարեջուրի խոշոր գա-

ւաթներով կը ճնկէին նախաւեան: Ամենէն վարպե-
տորդները շաճաւեան շիշերով կը թոցնէին՝ վերարկու-
ներու տակ պահելով: Պարոն մը երկուքուկէս ոսկինոց
խաւքաւի տակաւիկ մը համարձի ըրաւ. և անկին մը
կծկուելով լալեց, շրթունքները լգելով: Ուրիշ որդրա-
մոլ մը փափանի պնակ մը անհետ ըրաւ. անձեռոցին մէջ:
Այսպէս բոլոր սեղանները յարձակմամբ առնուեցան:
Երբ ալ ուտելիք բան չմնաց, պատուարժան հիւրերը
սկսան թուզի փնտռել, ծրարելու համար վառեակներն
ու կարկանդակները, զորս գրաւած էին բանի ոյժով:
Խեղճ վաճառականը (*) հետեւեալ օրը տեսաւ թէ սեղան-
ներուն վրայ փոքր մը բան մնացած էր: Ծակաւք հրա-
ւիրեալները 5000 մարքի ուտելիք, 600 շիշ Շամբանիա
և 400 շիշ Պօրտօ կըլլել լմնցնելէ ետքը իրենց երկայն
թաթերովը շատ բաներ վերցուցած էին: Արդէն հան-
դէսին օրն իսկ չէին ամօցեր ծաղկի կողմները վերցնե-
լու: Վաճառատան պաշտօնեաները արիւն բրտինք թա-
փած էին գուրս հրելու այս տարօրինակ հիւրերը որոնք
անշուշտ հիմա լրագիրներու ծանուցման բաժինը աչքէ
կանցունեն ու նոր վաճառատուններու բացումը մազթելով
ասանկ ֆելեթիի մը կը սպասեն»:

(*) Բոժ.— Իրաւոր, յիմարտնոցին մէջ այդ կարգի
վաճառականներէն շատ աւելի խելացիներ կան, բայց
խելճերը տիրուածանք չունենալուն պատճառաւ հոն
նետուած են:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ (ՍԺԱՆԱ ԲՈԺՈԺԻԿ ԵՒ ԸՆԿ)

Այգեստան

Տեղացի երիտասարդ մը՝ ուսուցչական կա-
ճառը իր այգին հրաւիրելու... բարեմտութիւնը
ունեցաւ: Ասոնք բերդի վրայ յարձակող բանա-
կի մը պէս որթատուկերուն վրայ նետուեցան ու
խաղողներուն անանկ քրոքան մը նետեցին որ,
այգին տէրը այս տարի պաղ—պօզումի ընելու
հոգէն աղատեցաւ: Իրենցմէ մէկը տեղէն չերե-
րալու աստիճան փորը լեցնելէն վատ, թէ՛ բալ-
թօին գրպանները լեցուց և թէ... դիտու շաբաթան:

Քամչութքա

Մօտայանի ու ինքնահաւան մեծափոր պա-
րոն մը՝ ճաքէթին վրայէն գործըն պիլիմի ըէ-
տէնկութ մը հագնելով հրապարակին մէջ սկսաւ
կոկոզավիզ պտտիլ, առարկայ ըլլալով զինքը տես-
նողներու ծիծաղին ու քահաջին:

Ուլիցա Վարդափրա

Բերդիները մասնակի ժողովի մը մէջ որոշեցին
յայտարարել թէ, ուղուած ձեւովը, պիլիմի և է-
նինէ ուղունունա մասալը տեսակէն մաղ ու մօրուք
կտրել ուղողները՝ բացի շաբաթ իրիկուններէ և
կիրակի օրերէ՝ շաբթու մէջ իրենց դիմելու են:
Հակառակ պարագային, պիլիմի կամ կուստօյի
մասին գիտողութիւն ընելու չէ:



ՄՈՒՋԱՖԵՐԵՏՏԻՆ ՇԱՀ

Մուղաֆերետտին Պարսից Շահը որ ծնած է Թէհ-րան 1852 թուականին, 'ի գահ բարձրացաւ 1896 մա-յիս 1ին : Իբր լուսաւորուած մարդ Մուղաֆերետտին Եւրոպական շատ մը լեզուներէ վատ Ռուսաց և Ասիա-կան կարգ մը լեզուներու ալ տեղեակ է, որոնց հետ Պարսկաստան շարունակ յարաբերութիւն կունենայ : Իր առած խնամով կը թուլեցնէր տակաւին թագաժա-ռանգ եղած ատեն փափաք տուած էր եւրոպական քա-ղաքակրթութեան ճոխ ծրագրով մը գործել : Պարսկաս-տանի մէջ իր օրով հրատարակուեցաւ «Դաւրէթի Պաշ-տունները» անունով լրագիր մը որ գրականութեան նուիրուած պետական առաջին պարբերական թերթն է, որուն էջերը Շահը իր ինքնագիր յօդուածներովը կը ճո-խացնէ : Իր ժամանակին հաստատուեցաւ կրթական, երկրագործական, բարեգործական կարգ մը հաստատու-թիւններ, բայց ամենէ աւելի զինուորական զարգացումը մտցունելու առաջին հետաքրքրուողն եղաւ : Ինք ալ իբր ուսումնական գիտութեան մեծ անուն ու համ-բաւ շահած է :

Դաւրէթի մէջ հիմնեց «Մուղաֆերիէ» անուն զինուորական բարձրագոյն ուսումնարանը որ մեծապէս կը նպաստէ Պարսկաստանի մէջ արժանաւոր սպաներ հասցնելուն : առանձին ուշադրութիւն դարձուց պետու-թեան սահմաններուն վրայ ժողովուրդը վայրենաբարոյ թիրբերու և բիւքտերու հալածանքէն ու կողոպուտէն զերծ պահելու համար : Քիւրտերէն «Համիտիէ» կանու-նաւոր զօրքեր կազմեց :

Ուշ դարձուց երկրագործութեան, վաճառականու-թեան ճամբաներու ազատ երթևեկութեան ու վերջա-պէս Պարսկաստան իր այս վեհապետին կը պարտի արդի ունեցած յառաջդիմութիւնը :

Մուղաֆերետտին ունի այսօր 4 որդի ու մէկ եղբայր, Զիլի-Սուլթան անունով, որ թէև իրմէ մեծ սակայն չէ ունեցած գահաժառանգի իրաւունքը, որու մասին հետեւեալը կը պատմուի :

Մուղաֆերետտինի եւ Զիլի-Սուլթանի հայրը Նասրետտին Շահ իր կենդանութեանը օրէնք մը հրա-տարակած է Եւրոպական քանի մը տէրութիւններու նա-խաձեռնութեամբ : Թէ՛ գահը պիտի անցնի քահանայ-րի տոհմ ունեցող մայր—թագուհիէն ծնած աւագ որ-դին : Շահի աւագ որդին Զիլի-Սուլթանը չը համա-պատասխաներ այդ պայմանին, որովհետեւ ոչ թէ մայր թագուհիէն ալ թափառիկ ձեղէ կինէ մը ծնած է : ա-տով Եւրոպական պետութիւնները գահաժառանգի ար-ժանաւոր յաջորդ Շահին երկրորդ որդին կը ճանչնան :

Թէև Զիլի-Սուլթան յենչով իր աւագութեանը բացարձակ կերպով իր ուժը կը գործածէ գահը խլելու համար իր եղբայր Մուղաֆերետտինէն, բայց ժողո-վուրդը երբէք կարեւորութիւն չը տալով միշտ հաւա-տարիմ կը խոյ իր վեհապետին, «բարի» մակերը տա-լով անոր :

ԱՐԱՄ

ԶԻՆԱԿԱՆ ՏՕՆԵՐ



Երկրորդ տնգիս վրայ չը կայ աղբ մը որ Զի նացիներուն չափ քիչ տօներ ունենայ : Անոնք ընդհանուր ուրախութեան մէկ թուական մը ու-նին, այն է Ամանօր : Երբոր լուսնոյ նորիւր կը մօտենայ, ու երբ արեւը Զրհուին 15րդ աստի-ճանին կը հասնի, բոլոր պաշտօնատուներ 10 օր առաջ կը փակուին ու Մանուարիները (նախա-րար) իրենց կնիքները կը պահեն մինչև առա-ջին լուսնոյ 20րդ օրը :

Հարուստ ու աղքատ ամեն զբաղումէ ձեռք քաշած, միմիայն մեհեանները ու զբօսալայրե-րը կը յաճախեն ինքզինքնին կերութեամբ տա-լով : Տարուան վերջին օրը ամեն Զինացի ար-թուն կը կենայ մինչև կէս գիշեր. այն միջոցին հրթիռներ կը վառին ու հրախաղութիւններ կը լլան : առտուան դէմ ալ տուններուն մէջ պատ-րաստութիւններ կը լլան յաջորդ օրուան հանդէ-սին համար ու առտուն արշալոյսին ամբոխը կը գիւմէ աղօթատեղիները :

Այդ տօնախմբութիւնը կը կոչուի Սուլ-Անի, զոր կը տօնեն քաղքին շուրջը չորս մեհեաննե-րու մէջ, որոնց շուրջը այս առթիւ կը բարձրա-ցնեն պամպուէ մեծալայն թատերասրահներ, ուր ներկայացումներ կը տրուին ի պատիւ. նոյն մեհեանին չաստուածին :

Բոլոր տուններու կա՛կ կարասիքը կը նորոգ-ուին ու տնեցիք իրենց ամենէն ծանրագին եւ գեղեցկագոյն հագուստներով կը զարդարուին : Այս վերջին սովորութիւնը պարտաւորիչ է, հա-կառակ պտրագային Զինացի մը ինքզինքը ուխտ-եալ աղքատ դաւանած կը լլայ. հետեւաբար սոմեն շանք կընէ կարելի եղածին չափ պահելու այդ

աւանդական սովորութիւնը, մինչև իսկ գողնալով երբեմն եթէ կարողութիւն չունենայ ծախսուանել:

Զինական օրէնքը կը տրամադրէ որ Ամանորի հանդէսները 3 օր տևեն, բայց ժողովուրդը շատ անգամ կրկնապատիկ տևողութեամբ կը տօնէ:

Առաջին օրը կը կոչուի Բայ-Եաթ (օր թըռչուններու) որ հաստատուած է յիշեցնելու համար թէ թեաւորք ալ մարդուս սնունդներէն մէկն են: Նոյն օրը կը հրաժարին միս ուտելէ և չերմ հաւատացեալները խիստ ծոմ կը պահեն:

Երկրորդ օրն է Բու-Եաթ (օր շուներու). Զինացիք այն աստիճան կը յարգեն շուները որ անոնց համար մասնաւոր դադաղ շինող գործուորներ ունին: անանկ կը հաւատան թէ իրենց իմաստուններէն մէկը կըրցած է մահուանէ ազատիլ շան մը շնորհիւ, որ յոյստելով կերեր է մարդասպան, և սակայն, տարօրինակ հակադրութեամբ մը, Զինացիք շունի միս կուտեն:

Երրորդ օրն է Չէն-Եաթ (օր խոզերու). Զինացիք կը մեծարեն յիշատակը այս կենդանիներէն մէկուն, որ աւանդութեանց նայելով, նուիրական թանկագին ձեռագիր մը աղատեր է հըրդեհէն: Այն օրը խոզի միս չեն ուտեր:

Չորրորդ օրն է Եառնկ-Եաթ (օր ոչխարաց) այս օրը նուիրուած է Բուն-Բզօն-Վանկա անուն հովիւի մը յիշատակին: Հովիւ մը որ խեղճութեամբ ապրած է, բանջարեղէններով միայն սընանելով ու ծառերու կիզէները զգեստի տեղ գործածելով, և սակայն ոչխարաց բրդէն կարելի եղած օգուտը քաղելու միջոցները սորվեցուցած է իր ազգին:

Հինգերորդ օրն է Նիւ-Եաթ (օր կովերու). այս կենդանիներէն մին իր կաթովը սնուցեր է եղբր մանուկ մը որ իր ծնողքը կորսնցուցած էր և յետոյ մանկատան ըլլալով, ի պատիւ նոյն կովին մեհեան մը կանգնել տուեր է: Այս պատճառաւ շատ մը Զինացիք կովու միս չեն ուտեր, ոմանք ալ 40 տարին անցունելէ ետքը կը հրաժարին անկէ, սակայն թէ ոչ իրենց փրկութիւնը անյուսալի կը կարծեն:

Վեցերորդ օրն է Նա-Եաթ (օր ձիերու). այս տօնը հաստատուած է ժողովուրդին զգացնելու համար թէ գիտնայ յարգել այդ օգտակար չորքոտանին:

Եօթերորդ օրը նուիրուած է մարդ էակին եհն-Եաթ: Նոյն օրուան տօնին աստուածն է Բօն-Չօ, որ Զինացիներուն սորվեցուց բրինձով, ցորենով ու միսով սնանիլ:

Ութերորդ օրն է Բօ-Եաթ, (օր արմատաց):

ասոր դիցազն ալ Բօն-Չօ է, որ առաջին անգամ իրենց սորվեցուցեր է հունտերու օգտակարապէս կիրառութիւնը ու սննդարարութիւնը:

Բօն-Չօ կը նախագահէ նաև իններորդ աւուր օրը կոչուի Նօ-Եաթ (օր կտաւի). վասն զի Զինացուց սորվեցուց վուշը մանելու, զայն գործածելու արհեստը:

Տասներորդ օրը նուիրուած է Գերագոյն էակին:

Այցեւորման գործածութիւնը Զինաստանի մէջ անյիշատակ ժամանակներէ ի վեր ծանօթ է: Զինացիք ալ Ամանորի աւթիւ իրարու այցելութիւններ ու ընծաներ կուտան ու փոխադարձ շնորհաւորութեանց մեծ տոմսեր կը զրկեն, անոնց մէջ ներկայացնելով երեք զլխաւոր երանութիւններ, զոր, ըստ իրենց կարծեաց, մարդիկ կարող են վայելել երկրի վրայ. այսինքն՝ 1. Ամուսնութիւն. 2. Ժողովրդային պաշտօն մը (կամ յառաջգիւծութիւն) և 3. Երկար կեանք. Սոյն երեք բարեմակութիւնները կը ցուցնեն մանկան, մանկատանի և ծերունիի մը պատկերներով, վերջինին քով արագիլ մըն ալ նկարուած է իբր խորհրդանշան երկայնակեցութեան:

Այս տոմսերը տպագրուած են Զինական կարմրագոյն թուղթի վրայ հետեւեալ կամ հոմանիշ վերնագրով մը. «Երջանկութիւնդ ծաղկեալ ըլլայ»: Կողմնակի ալ գրուած է. «Ես» (դրկողին պատանկալ անունը) մինչև գետին կողմնեմ զՁեզ: Յաւիտեան կեցցէք»:

ՈՒՅՏՈՒՐՄԱՍԻՕՆ



ՊԱՂ ՊՕԶՈՒՄՈՒ

— Մօրու Մայնո՞ւ, տիւն նէ՛րէտէ իտինիլ. հիշիճիք հապէր վէրմէտէն գաշըվերմիշինիլ. զարարը եօգ, օնուն սըրասը կէլիր:

— Հը՛հ. . . ույուն թույա պա՛գ. արդանտան գըղըլ պօյալը մա՛մ մու եօլլայաճագտըգ. կէչէն կիւն Թագուկ կելինտէ սէօզ վէ՛րմէտին մի իտի:

— Էօյլէ ամա, սապահլայըն հիշիճիք պիր սէս վէրմէղլէ՛ր մի. նէչէ՛ր եաբտընըզ, քիմ պիլիր նէ գըֆլար գաշըրտընըզ. եազըգլա՛ր օլտուն:

— Հէմ պիլսէն քիմլէրի տէ կէօրտիւք:

— Քիմի:

— Շէյ. Թագօր՝ արգատաշլարըլլա պէրապէր պաաեա (պաղ) կէլմէտի. պէն տէ սընըր-

տայտըմ. էօնիւմտէն կէշտիլէր տէ՝ Թագօր եա-
վաշճա եագլաշըպ՝ գուլարմտան աշաա սէնի սօր-
տու:

— Էյ սէն նէտէտին:

— Օ տահա պէլքի տէ ույույօր տէտիմ:

— Ա գըզ, էօյլէ լագըրաը էտէրլէ՞ր մի...
քիմ պիլիւր չիւտի չօճուգ ֆիքրինտէն նէլէ՞ր
կէշիւրիւր. «պու նէ՞ բիւսիւր գըզըմըն» տէր, եա-
զըզ պանա, սէնտէն ումմապտըմ:

— Նէ իսէ, իշթահընը եարընա սագլա:

Իշպու միւքեալէմէ՝ չարչէնպիհ կիւնիւ ագ-
չամը՝ իքինճի ուչասթըն՝ եօքարքի մահալլէ սօ-
գագլարընըն պիլինտէ՝ պիւր գաբը էօնիւնտէ
տուրան իքի եէթիշմիշ գըզլար ալաաընտու ճէ-
րէյան իթմէքտէ իտի:

Հաւա պօզուլմաղա եիւզ թութմաշ օլտու-
ղընտան՝ հէր քէս էվինէ շիթաղան օլմագտա ի-
տի: Գաբու էօնիւնտէ գօնուչան գըզլարտան պի-
լիսինին բէտէրի, Մաթոս աղա, իշէրտէն շիտտէթ-
լէ չէօյլէ պաղըրտը:

— Գըզ, իշէրի կէլ պագայըմ, կալիպա կիւն-
լէր գըսա կէլիօր տա ագչամլարը տա գաբը էօ-
նիւնտէ պիւրպիլինիզլէն ֆըսքըսլաշըօրսընըզ.
հայտէ սէնտէ էվինէ կիթ մօրու. թէվէքէլլի պա-
պարընըզ սիզտէն աղլաշմայօր եա:

Իքի գըզլար հէման ալըրլուպ, պիլի էվէ
կիրտի, տիկէրի տախի գարչըքի գաբուտան ի-
շէրի գաշըպ՝ շիտտէթլէ գաբուլու գաբատը:

Մաթոս աղա՝ քէնտի պաղընտան օ կիւնիւ
չըգան իւզիւմին ազ ֆիյաթլէ սաթըլմասընտան
տօլայը հըրսլը կէօրիւնիւլօր իտի. վէ պիւր թագըմ
գօճալարըն առէթլէրի իւզրէ՝ հագսըզ օլարագ
հըրսընը գարըլնտան վէ եա ֆամիլեա էշիսա-
սընտան ալըպ: պաղըրըպ չաղըրտըգտան սօնրա
եաթաղընա կիրտի՝ պուրնուսուսն ալթընտան չէօյ-
լէճէ մըրըլտանարագ:

— Գարը տէյիլմիսինիզ, հէփինիզտէ պիւր թա-
պիյէթտէ, առամըն պաշընա չըգաճագլար պէ՝
առամը տինտէն լմանտան իտէյօրլար, պէ:

Գատըն իսէ, գօրդուսուստան վէ եախոտ հա-
լիմլիկինտէն սէս չըգարմայուպ, «Աման առվաա-
ղիւ, շու պաղ պօզուլմուսու քէտէրսիզէ պիւր կէ-
շիսէք» տէյսւ քէնտի քէնտինէ տուվա իթմէք-
տէ իտի:

Բէնճէնպիհ սապահըրը, օրթալըգ տահա
գարանըրը իքէն, պիլիմ Մաթոս աղա ույանըպ
խանէ գաբուսու էօնիւնտէ տուրան վէ ագչամ-
տան իւզէրինէ իքի թանէ աբօլին (պէօյիւք ֆը-
չը) եէրլէշտիւրմիշ օլան արապայա եանաշըպ, ա-
րապաճ յը ույանտըրտըգտան սօնրա՝ լանէ տէ-
րօնիւնտէ պուլուսանլարը տախի ույանտըրտը:

Մատմալէլ Մայնոս ագչալտան սէօզ վէրմիշ

օլտուլու քէնտի ալդատաշընը կիրտիպ ույանտը-
րըպ խանէյէ կէթիւրտի:

Մաթոս աղա. — Հատի, հատի, չաբուգ օլուն:

Իշպու վէրիլէն գօմանտա իւզէրինէ՝ խանէ
տէրուսինտէ պուլուսանլար պիւրէր պիւրէր արա-
պա իւսթլանտէքի ֆըչըլարըն իշինէ կիրտիլէր,
իւք կիւնիւ ֆըչըլարըն իւզիւմ իլէ պուլաշըգ օլ-
մասընտան իւսթ պաշարընըն քիլլէնմէսինէ
ասլա էհէմիլլէթ վէրմիլլէք:

Արապա եօլա չըգըպ՝ օլանըն իշինտէ իլէ-
րուլէմէքտէ օլան տիկէր արապալարըն գաթարը-
նա գարըլտը:

Իշպու գաթարլարըն մէնլարէսի ճալիպի
տըզգաթ իտի, Պիւր թարաֆտան թէքէրլէքլէ-
րին ճըրըլտամալարը, պիւր թարաֆտան կալտա-
լարըն սէսլէրի, պիւր թարաֆտան պօշ ֆըչըլա-
րըն սալլանմագտան հուսուլէ կէլէն թանկըռ
թընկըռ սէսլէր, պիւր թարաֆտան անլէրին ի-
շինտէ տօլան գաաըն վէ գըզլարըն թիւրքիւլէ-
րի վէ եա պաղըրարագ գօնուլմալարը. պիւր թա-
րաֆտան 5-6 վէ 8-10 եաշընտա չօճուլարըն
պաղըրչմալարը, արտաա պիւր իսէ քիւլիւք մախ-
սուլարըն «ընդա՛ ընդա՛» սէսլէրի՝ ինտանա՝ Բա-
բէլօն գուլէսինին գարըրըզլըղընը տէրխաթըր
իթիւրմէքտէ իտի:

Մալիւմ օլտուլու իւզրէ եէվմի մէզքիւր
սապահըրը հաւա էքէյիճէ սօղուգ օլուպ, բալթօ-
սուգ օլանլար թիւրիլ թիւրիլ տիթէմէքտէ իտիլէր:
Կիւնէշին զիյալարը տահա կէօրիւնմէտէն,
պիլիմ Մաթոս աղանըն թագըմը պաղա եէթի-
շիպ, հէման էօթէտէն պէրուտէն պիւր աղ չալը
չըրըր թօփլոյըպ պիւր աթէշ եագալըլար վէ ա-
նըն էթրաֆընտա ըսընմաղա պաշալտըլար:

(Տէվլամի)

ԳԷՏԻ ԿԷՕԶԻԻ

Լոյս տեսաւ Քերակսան—Ընթերցարան պատ-
կերազարգ նախակրթարան Ա. տարի, գրեկ կար-
գալու բնական գրութեամբ. գրին է 5 զրուշ:
Դիմել Ա. Զարպհանէլեան գրատունը, Վառնա:

Հանձնակատար ՆՇԱՆ ՍԱՐԲԱՆԵԱՆ, կը ծանու-
ցանէ արգոյ հասարակութեան թէ Վառնայի, Եռմուռի,
Ռուսճուքի, Թրնոփոյի, Բլէֆոյի և Սօֆիայի միջև շարու-
ղակարար և կանոնաւոր երթևեկութիւն հաստատած է:
Կը խոստանայ գոհացուցիչ պայմաններով ճշգիւ գործադրել
իրեն ըլլալիք յանձնարարութիւնները: Իր կայարաններն
են, ի Վառնա Զարպհանէլեանի գրատունը, ի Եռմուռ
կոստան Պօգաճեանի խանութը, ի Ռուսճուք Գալֆանեան
եղբարց ոսկերչատունը և ի Սօֆիա Մարտիրոս Յովհան-
նէսեանի սրճարանը:

ОТГОВОРНИКЪ Ж. ИВ. ЖЕКОВЪ
Печатница „Взаимность“ — Варна.